



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

**USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT**

**ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՀԱԶՈՂՎԱԾ ԾՐԱԳԻՐ

Հաշվառելով անհատական կենսաթոշակային վճարումները



Լուսանկարը՝ ՍՊՀՀ ֆոտոտարիկի

ԱՄՆ հիմնական դերակատարները բարձր տրամադրություն ունեն. Վալերին հանձնում է նոր մասնագրերը փոխնախարար Արտեմ Ասատրյանին



Լուսանկարը՝ ՍՊՀՀ

Հնարավոր չէ թերագնահատել որոշում կայացնողների պատրաստակամության արժեքը

ՀՀ կառավարությունը մի քանի տարի ուսումնասիրել է կենսաթոշակային բարեփոխումների տարբերակներ, և ԱՄՆ ՄՁԳ-ն նպաստել է մի քանի տարբեր նախաձեռնությունների այս գործընթացին աջակցելու համար: ՀՀ կառավարությունը նշանակեց Կենսաթոշակային բարեփոխումների աշխատանքային խումբ (ԿԲԱԽ), որն արդեն իսկ սկսել էր իր աշխատանքը 2007թ. հունվարին՝ ՍՊՀՀ ծրագրի մեկնարկից ի վեր: ՍՊՀՀ կենսաթոշակային գծով մասնագետները սերտորեն աշխատել են ԿԲԱԽ-ի հետ կենսաթոշակային բարեփոխումների քաղաքականության մշակման ուղղությամբ: ՍՊՀՀ-ն աջակցել է ԿԲԱԽ-ին մի քանի ոլորտներում. անցյալ ամիսների ընթացքում ծրագիրն աջակցել է կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման մոդելավորման և օրենսդրական նախագծման հարցում:

2008թ. օգոստոսին ԿԲԱԽ-ն ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացրեց բարեփոխումների ծրագրի վերջնական նախագիծը, սակայն խումբը կազմալուծվեց և նրան փոխարինեց Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման աշխատանքային խումբը (ԿԲԻԱԽ), որին հանձնարարված էր մշակել օրենքի նախագծեր և անհրաժեշտ ընթացակարգային բարեփոխումներ նոր կենսաթոշակային համակարգը իրականացնելու համար: ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի 1487-Ն որոշմամբ հաստատվեց բարեփոխումների ծրագիրը: ԿԲԻԱԽ-ի կողմից մշակվեց օրենքի չորս նախագիծ և 2009թ. ապրիլի 3-ին ներկայացվեց ՀՀ կառավարության հաստատմանը: Կենսաթոշակային բարեփոխումը եկամտահարկի համընդհանուր բարեփոխման մաս է, որի արդյունքում կստեղծվի եկամտահարկի անհատական հաշվառման համակարգ և կենսաթոշակային ներդրումներ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից: Կենսաթոշակային և եկամտահարկի բարեփոխված համակարգի դեպքում ՊԵԿ-ը կգրանցի եկամտահարկի անհատական վճարումները և կենսաթոշակային ներդրումները: Ներկայիս համակարգում աշխատողները վճարում են միանվագ եկամտահարկ և քաղաքացիների համար անհատական հաշիվներ չկան, իսկ այս նոր համակարգով ՊԵԿ-ը կստեղծի աշխատողների անհատական հաշիվներ: Բարեփոխումներն իրականացնելու հիմնական գործիքն այնպիսի համակարգչային ծրագիրն է, որը ՊԵԿ-ին հնարավորություն կտա հավաքագրել և ուղղորդել ՀՀ քաղաքացիների անհատական ներդրումներն իրենց նախընտրած ակտիվների կառավարիչներին:

ՍՊՀՀ թիմը ներգրավել է նոր տեղեկատվական համակարգի մասնագրերի մշակման համար անհրաժեշտ ռեսուրսները, որի միջոցով կգործարկվի նոր համակարգը: 2009թ. առաջին եռամսյակում ծրագիրը ձեռնարկեց նոր համակարգի բիզնես գործընթացների վերլուծությունը, որոնց մանրակրկիտ վերանայումից հետո հնարավոր եղավ մշակել տեղեկատվության կառավարման համակարգի մասնագրերը բիզնես

գործընթացների իրականացման համար: ՍՊՀՀ-ն մոբիլիզացրեց միջազգային, բազմաֆունկցիոնալ թիմ և ավարտին հասցրեց մասնագրերի մշակումը ինչպես խոստացվել էր՝ մինչև ս.թ. մարտի վերջ: Թիմը բաղկացած էր ՍՊՀՀ մշտական աշխատակիցներից՝ Վալերի Դմիտրովիչից, Վահագն Հարությունյան, Հասմիկ Ղուկասյան, Գայանե Դալլաբյան և Աննա Տեր-Ղուկասյան, ինչպես նաև ՍՊՀՀ կարծաժամկետ հատուկ փորձագետ Փիթեր Ռեդքլիֆը, ով մեծ փորձառություն ունի այլ երկրներում՝ վերջերս Մակեդոնիայում, տեղեկատվության կառավարման նման համակարգեր հաստատելու գործում: Հայ փորձագետները նախապես հանդիպել էին պրն. Ռեդքլիֆին 2008թ. մայիսին ՍՊՀՀ կողմից կազմակերպած Մակեդոնիայի վերապատրաստման այցի ժամանակ: Նման այց նախատեսված է նաև 2009թ. ՊԵԿ-ի կողմից:

ՍՊՀՀ ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացմանը, բարելավել ՀՀ կառավարության և ՀԿ-ների ինստիտուցիոնալ և մարդկային ներուժը, ինչը ամրագրված է ԱՄՆ ՄՁԳ՝ Հայաստանի առաքելության բարելավված սոցիալական պաշտպանության Ծրագրային ռազմավարության մեջ:

Ծրագիրը տրամադրում է տեխնիկական աջակցություն չորս հիմնական ոլորտներում՝ սոցիալական ապահովագրություն, զբաղվածության ծառայություններ, աշխատանքի անվտանգություն և պաշտպանություն, սոցիալական աջակցություն: Այն նպատակ ունի նպաստել անցմանը դեպի ինքնաբարելավում և կայունություն՝ միևնույն ժամանակ նվազեցնելով բնակչության կախվածությունը հանրային հոգածությունից: